

ԻՐԱՎՈՒՆԿ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ



Redaction du journal armenien
„Hantes-Amsortia“ Vienne

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 26 ՓԵՏՐՈՒԱՐ 1897

ԹԻԻ 9

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներկայ 1897 տարեշրջանի

Պոչկարիոյ համար տարեկան 10 ֆր
" " " 1/2 " 5 "
Սրտասանմանի համար " 12 "
" " " 1/2 " 6 "
Կանխիկ վճարելի

Նախակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԿՐՈՆ ՎԱՌՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն դրկուիր եւ յարկար դատ-
ուածներն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին կամ մասամբ:

Երեւոյցմանց տողը 20 սանթիմ.
երեքէն աւելի անգամներու համար
20 առ 100 զեղ կը լինի:

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ

ԺՈՂՈՎԻՆ

Փետրվար 23 ի Նիստը

Առաջին խօսողն է Տ. Տրնի Գոչէն,
որոյ բանախօսութեան համառօտ բո-
վանդակութիւնն է հետեւեալը:

— Դեղին տետրակը շատ անկա-
տար և գրեթէ կ. Պոլսոյ դեպա-
նին մէկ մենախօսութիւնն է: 1894
տարւոյ սկիզբէն դեպաքանը զար-
մանալի հեռաւորութեամբ մը կը
նոխտատեսէ այն սոսկալի պատա-
հարները, որ տեղի ունեցան աշ-
տահետ: Նա սխալած է սակայն
կարծելով թէ անկարելի պիտի ըլ-
լայ հայկական խնդրին համար
բանաւոր լուծում մը գտնել, որով-
հետեւ Հայերը բոլոր կայսրութեան
մէջ ցիր ու ցան կ'ապրին և իրենց
այս վիճակը չենքիր որ անկախ
Հայաստան մը կազմուի. կը մնայ
անդին միայն բարենորոգմանց
գործադրութիւնը, որոյ համար
Թուրքիա խոստումներ կ'ընէ, բայց
ամեն մարդ գիտէ թէ ատենք ի՞նչ
արժէք ունին: Այսպէս մինչ Տ.
Գամպօն կը կարծէ թէ հայկական
խնդիրը չպիտի կրնայ լուծուիլ,
թուրք կառավարութիւնը գտաւ
զայն լուծելու միջոցը, որ է շնչել
հայ ժողովուրդը: Տ. Գամպօն կը
նախատեսէ թէ զայիք պատահա-
րները պիտի ստիպեն տէրութիւն-
ները միջամտելու. այդ պատա-
հարները կատարուեցան Տ. Գամ-
պօնի նախատեսածէն շատ աւելի
սոսկալի հանգամանքներով և սա-
կայն միջամտութիւնը տեղի չունե-
ցաւ:

Բանախօսը կը պատմէ Սասունի կո-
տորածը, Մայիս 11 ի բարենորոգմանց
ծրագրին պատրաստութիւնը, սեպտեմ-
բեր 18 ի հայկական ցոյցը, Հայաստանի եւ
կ. Պոլսոյ ջարդերը, Պանքային յար-
ձակումը եւ կը յիշէ հետեւեալ միջա-
դէպը:

Տիարպէքերի խռովութեանց ժա-
սանակ Տ. Գամպօն կը հրամայէ
տեղւոյն ֆրանսական հիւպատոսին
որ երթայ վալիին և բարձրաձայն
յայտարարէ իրեն թէ նա իր գլուխը
տալով միայն պիտի կրնայ ազա-
տիլ դեպաքանին ձեռքէն, եթէ հիւ-
պատոսը սպաննուի խռովութեանց

մէջ: Սպաննուիքը ունեցաւ իր
փրկարար արդիւնքը: Դեպաքանը
ուրիշ պարագաներու մէջ բռնելու
էր միեւնոյն սպաննակաւ դիր-
քը:

Տ. Գոչէն Հայր Սարգիսի սպան-
ման եւ Կրէտէի խնդիրներն ալ յուզե-
լիկով կ'ըզրակացնէ

Թուրքիոյ հանդէպ բռնի ոյժ
գործածելու բացարձակ հարկը ակ-
նհետ է. այդ կը պահանջէ քաղա-
քակրթեալ Եւրոպայի պատիւը:
Ֆրանսա կը սիրէ խաղաղութիւնը,
բայց կը սիրէ նաեւ արդարութիւն-
նը ու ազատութիւնը: (Երկար
ծափ.)

Երեսփոխան Տ. Միլան գլխաւորա-
պէս կը ջանայ երեւան հանել Տ. Հա-
նթօյի տկար, թոյլ քաղաքականու-
թիւնը, որոյ գիտումն է չվշտացնել
Ռուսիա՝ ազգեցիկ դիրք մը բռնելով Դե-
բան հանդէպ: Նա ցոյց կուտայ թէ Տ.
Գամպօնի տեղեկութիւնները եւ կար-
ծիքները բնաւ չեն համապատասխան
արտաքին գործոց նախարարին հրա-
հանքներուն: Դեպաքանը կ'առաջարկէ
ազգու միջոցներ գործադրել Թուրքիոյ
դէմ, մինչ նախարարը կը միտի բարե-
կամական խորհուրդներով Սուլթանը
համոզելու: Տ. Միլանի երկար բանա-
խօսութիւնը, որ խիստ յարձակում մը
էր Տ. Հանթօի դէմ, լի կորովի առ-
բանաբանութեամբ եւ հզօր փաստերով
ստիպուած ենք ամփոփել հետեւեալ տո-
ղերուն մէջ:

Մինչդեռ Տ. Գամպօն կըսէ թէ
բարենորոգմանց գործադրութիւնը
Թուրքիոյ կարողութիւնէն վեր կ'ե-
րեւի, Տ. Հանթօ կը պատասխանէ
անոր այնպիսի կերպով մը որ կար-
ծես թէ դեպաքանը ըսած ըլլար թէ
բարենորոգումները կրնան գոր-
ծադրուիլ: Մինչ դեպաքանը կը գրէ
թէ Սուլթանի խոստումները չպի-
տի պահուին, նախարարը անոր կը
հարցնէ թէ արդեօք կարելի չ'է զա-
նոնք իբր հիմն ընդունիլ տէրու-
թեանց պատրաստիլիք ծրագրին:
Մինչդեռ Տ. Գամպօն կ'առա-
ջարկէ Սուլթանին վրայ ազդելու
համար անոր յայտարարել որ վեց
կառավարութիւնները որոշած են
մէկ մէկ զրահաւոր զրկել, եթէ
նոր խռովութիւն մը պատահի, Տ.
Հանթօ խորհրդարանին կը յայ-
տարարէ թէ Եւրոպական գլխաւոր
գիտութիւնը կրնայ Թուրքիոյ
հետ համախորհուրդ յուզել երկրին

բարեքման խնդիրը: Նա կը գրէ
Տ. Գամպօնի թէ Թուրքիան դեպ-
պան Միլանի պէյ զինք կ'ապա-
հովցնէ բարենորոգմանց խնդրոյն
մասին: Դեպաքանը կը պատասխանէ
«կ'ազնեմ որ հաւատք չընծայեք
Միլանի խօսքերուն, որոց միակ
նպատակն ձեզ հաւատացնել թէ
Թուրք կառավարութիւնը բան մը
կ'ընէ, մինչդեռ ոչինչ կ'ընէ»:

Ֆրանսա Ռուսիոյ հետ գաշնա-
կեց ըլլալով հանդերձ պարտի ու-
նենալ իր յատուկ քաղաքականու-
թիւնը: Ֆրանսա չափազանց եր-
կար ժամանակ հետեւեցաւ ուրիշ-
ներուն: Մեր կառավարութիւնը
թոյլ տալու չէ որ Գերմանիա
Ռուսիոյ աշակցութեամբ յափըշ-
տակէ այն դերը որ ցարդ Ֆրան-
սայի վերապահեալ էր Արեւելքի
մէջ: Տիմարութիւն կըլլար զրա-
մատելիքու անաւ, որոնք պատ-
րաստ են ամեն բան զոհել իրենց
արժեթիւքի կարմնակրուն: Ֆրանսա
չկրնար խուլ մնալ մարդասիրու-
թեան ձայնին և հայրենասէրներու
աղերսին: (Երկար ծափ.)

Այս ատենախօսութեանց ի պա-
տանիստ արտաքին գործոց նախարար
Տ. Հանթօն կը կարգաւ ճառ մը, զոր
կանխաւ պատրաստած էր, և որոյ
գլխաւոր կէտերն են հետեւեալները:

Ֆրանսա խաղաղութիւն կ'ուզէ
և ամեն ջանք պիտի ընէ զայն պահ-
պանելու համար: Կրէտէի առջեւ
Եւրոպական զրահաւորներու ներ-
կայութիւն կ'ապահովէ քրիստոն-
եաները և երաշխիք մ'է թէ Կրէ-
տէ ալ չպիտի մնայ Թուրքիոյ
ուզղակի իշխանութեան ներքեւ:
Տէրութիւնները Սուլթանին պիտի
առաջարկեն բարենորոգումներ որ
պիտի ապահովեն Թուրքիոյ ամբող-
ջութիւնը, գաւառներուն պիտի
տան աւելի ազատ վարչութիւն մը
և անխափր ամեն քաղաքացիներու
անհատական ազատութիւն:

Տիար Ժորէս կը պահանջէ կա-
ռավարութիւնէն որ Թուրքիոյ հետ
ժամուցադրեր փոխանակելու այժմ-
եան գրութիւնէն հրաժարելով գործ-
նական միջոցներ ձեռք առնէ չա-
րիքը բանալու համար և չթողու որ
Թուրքիոյ անբաղդ ժողովուրդնե-
րուն վերքերը փոխուին մահացու
ջրածգութեանց: Հակառակ պարա-

զային մէջ անխուսափելի պիտի ըլ-
լայ պատերազմը, որմէ Եւրոպական
կառավարութիւնը այժման կը վախ-
նան և որոյ վտանգը իրենք առաջ
բերին իրենց ցարդ բռնած ընթաց-
քով, այսինքն տարիներով անկա-
րեկիր հանդիսատես ըլլալով քը-
րիստոնէից այն վիճակին որմէ ծա-
գում առին խռովութիւններն ու
յեղափոխական շարժումները: Ի-
րենք են որ ժամանակին ազգու-
ապէս չպահանջեցին բարենորոգ-
մանց գործադրութիւնը ի նպաստ
Հայոց: Իրենք ձգեցին որ ժող-
վուրդը մորթուի, իրենք ձգեցին
որ այնքան ոճիրներ գործուին, և
հիմայ իրենք են որ կը յայտարարեն
թէ պատերազմի վտանգ կայ:

Ֆրանսա պարտի այսուհետեւ
հետեւիլ բարձրովն տարբեր և ազ-
գու քաղաքականութեան մը, եթէ
կուզէ վտանգին առջեւ առնել:
Վիճարանութիւնը կը փակուի և
ժողովը 83 ի դէմ 413 քուէով կ'ըն-
դունի բանաձեւ մը, որով իր հա-
ւանութիւնը կուտայ Տ. Հանթօի
յայտարարութեանց:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի մեր այս տարուան
Պատ. բաժանորդներէն որ հաճին
իրենց բաժնեգիններն անյապաղ
զրկել մեզ:

ԵՐԿՈՒ ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

(Շար. նախ. քիւն. եւ վերջ)

Նիւթական ամեն տեսակ շահե-
րը, իրենց ամենէն տգեղ առուով,
միակ ուղեցոյցն են այսօր Եւրո-
պայի քաղաքացիներուն, որոց
համար հետեւապէս ուրիշ կարգի
ո և է նկատումներ ոչ մի կշիռ, ոչ
մի նշանակութիւն ունին: Իրենց
համար պարզապէս ախմարներ են
անոնք, որոնք կը մտածեն թէ
մարդասիրութիւն, գթութիւն և
ուրիշ ազնիւ զգացումներն են մարդ-
կութեան այն շահերը, որոց կո-
րուտը պիտի ըլլար ոչխարհիս
մեծագոյն ազէտը:

Կառավարութիւնները իրերը այս-
պիսի տեսակէտով մը դիտելու և
գաւառելու ընդունակութիւնը կերե-
ւի թէ կորուսած են արդէն և ի-

րենց տրամաբանութիւնն իսկ շատ կը տարբերի հասարակ մահկանացուներու տրամաբանութիւնէն:

Ուրիշ ի՞նչ կերպով կրնանք բացատրել գերման կառավարութեան այս յայտարարութիւնը թէ իր արժանապատուութեան հակառակ կը նկատէ այսուհետեւ բանակցել յոյն կառավարութեան հետ, որովհետեւ սա -- լսեցէ՛ք, -- միջազգային իրաւունքը բռնաբարեր է զօրք հանելով Արեւելի մէջ, որ Սուլթանին օրինաւոր սեփականութիւնն է:

Ամեն պարկեշտ մարդ, որոյ ուղիղ խորհելու և արդար դատելու կարողութիւնը խանգարած չէ յաւատեւ յոռի տպաւորութեանց տակ, կ'ընդունի թէ Արեւմտեան թուրք օգնութեան համար Յունաստանի համար այնքան սրբազան պարտականութիւն մ'էր որ յոյն ազգը բոլորովին այլապէս, մարդկային և ազգային ամէն ազնիւ զգացումներէ զուրկ վիճակի մը մէջ գտնուած ըլլալու էր՝ իր այդ պարտականութեան հանգեպ անտարբեր մնալու համար: Իսկ Գերմանիա կըսէ--թուրքը իրաւունք ունէր կոտորելու բաւոր Արեւմտեան շրջանները և Յունաստանի պարտքն էր լռել:

Այնքան կը տեսնուի որ կառավարութիւնները հետզհետէ հեռանալով ժողովուրդներու խորհելու և զգալու կերպէն՝ հասեր են արդէն այն կէտը, ուր կառավարութիւն և կառավարեալ իրարու հակառակ դիրքերու մէջ կ'երեւին:

Իրաց այս վիճակին մէջ բնականաբար չէ որ ընկերվարական, անխիղճական, ոչնչական և այլ ծայրայեղ գաղափարներ Եւրոպայի մէջ անքան տարած կը ծաւալին: Ուրիշ կերպ չէր կարող ըլլալ ինչպէս բնական, նոյնպէս բարոյական օրէնքները անխնայ կը պատժեն իրենց դէմ մեղանշողները: Քաղաքական Եւրոպայի անիրաւութիւնները արդիւնք են անբարոյական և անբնական ուղղութեան մը, որոյ գոյատևելութեան հետզհետէ մեծագոյն խայթ մը պիտի դառնայ Եւրոպայի ժողովրդին խղճին և պիտի մղէ զայն իր մէջ սպրդած ապականութիւնը մաքրելու:

Հանրային գիտակցութեան այս զարթոյնը փութացնելով մարդկութեան մեծ ծառայութիւն մը մատուցած ըլլալու պատիւը ցմիշտ վերագրելի պիտի մնայ Հայաստանի և Արեւելի անկեալ նահատակներուն:

Եթէ այսօր քաղաքականութիւն և անբարոյականութիւն հոմանիշ բառեր են, վաղը հակառակ պիտի ըլլան անվերջ: Եւ փոխանցման մէջտեղի պարապը պիտի լնուն հայ և յոյն արեւնաթաթախ գիւղերը:

ԲԻՆԿԵԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

ԱՅ ԱՆ ԱՏ Ե Ս Ի Մ Ը

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(Շար. Ասիտոյ Բիւրո)

Քեամիլ կանէ իր զինուորները, և Քիւրտ ամբոխին հետ միանալով կ'երթայ ձորերը, ուր կը գտնուէր կանանց մեծ մասը: Հոս կը սկսի ահագին վայնասուն մը: Այս րերը կը սպաննուին չարաչար, բաց ի մէկէն որ կը յաջողի վերաւորուած փախչիլ: Վայրենի գաղանները՝ բոլորովին կը մերկացնեն հայ կիները, որոց պարկեշտութիւնը ալ չկրնար հանդուրժել անպատուութեան: չորս հարիւր կիներ ու մանուկներ կը խուժեն դէպ ի գետ՝ մահուամբ իրենց պատիւը փրկելու համար: Քեամիլ անմիջապէս զինուորներուն կը հրամայէ գետեզերքը բռնել և կը լռակ ընել հոն գիւմդներուն վրայ: այս կերպով կը նահատակուին և բեք կիներ: չորս հինգ կիներ ու աղջիկներ արգէն իրենց փրկութիւնը գտած են ինքզինքնին ալիքներուն յանձնելով: Ջինուորները կը պաշարեն կիները, որոնք կը յաջողին մէյմէկ շապիկ կամ այլ լաթի կտորներ գտնել ու անով ծածկել իրենց մարմինը: Քեամիլ կը հրամայէ կիները քշել դէպ ի Բինկեան, որոյ 200 տունները մուխի և բոցի մէջ էին: Ջորքերը կ'անարգեն ու կը ննջեն Հայուհիները: Այդ ժամանակ Ալանեան Գարեգինի կինը հերոսական սրտամարմնով մը նախ իր երկու զաւակները և ապա ինքզինք կը նետէ վառուած տան մը բոցերուն մէջ: Երկու զինուոր կը կոխեն Ս. Նիկողոսի մատուռը, ուր ապստամբութեամբ էր ուրիշներու հետ Ալազեան Մկրտիչի 15 առեկան աղջիկը, որ զինուորներէ բռնաբարուելէ յետոյ, անոնցմէ երկու հրացանի հարուած կ'ընդունի կուրծքին վրայ: Թէեւ զինուորները զինք մեռած կարծելով կը ձգեն, բայց թշուառ աղջիկը տակաւին ողջ էր ու քառասուն օր եւս ապրեցաւ: Վերջապէս կիները կը բերուին Բինկեան ուր Գօլօնց տան երգիքը կը խոնկին: Այս միջոցին զինուորական փողը կը հնչուի իրեն դադարի նշան: Տէր Յակոբ, զոր ֆուրտերը սկիզբէն փնտռած, բայց չէին գտած, իմանալով որ կիները ձորէն հանուած են, կերթայ հոն եղելութիւնը ստուգելու: Ռապապտի Եւալար և ուրիշ Քուրտեր կը նշմարեն զինք ու իրենց քով կը կանչեն: Տէր Յակոբ դադարի փողին հնչուած ըլլալուն պատճառաւ բաւական վստահութեամբ կ'անայ չարագործներուն և անոնց մէջ մանկուն պէս կը բռնուի: Քիւրտերը նախ կը կրտրեն անոր թեւերը, յետոյ դանակով կը մորթեն զինք ու մարմնոյն վրայ կաղ թափելով կը բռնկցնեն զայն:

Մինչդեռ կիները Գօլօնց երգիքին վրայ կը սպասէին, վարը կը հաւաքուին կատարուած հրճարութեան և սպանութեանց հեղինակները, տէ՛ք բերել կուտան ու ու կը պատրաստուին վայրենի խաբարածանքներ կատարելու, որոց մէջ զինուոր գերը պիտի կատարէր հայ կնոջ պատիւին բռնաբարութեամբ: Կիները գուշակելով իրենց գլխին գալիքը և ազատելու ուրիշ միջոց չտեսնելով, իրենցմէ երկուքը կը զրկեն Քեամիլին բողոքելու համար: Քեամիլ որ արգէն ցնցուած էր կանանց հերոսական գործերէն, կը ստատէ իսլամ խուժանը, յայտարարելով որ ալ իրենց պաշտօնը վերջացած է և կը հրամայէ գաղթեցնել ծրարութեամբ քեյ՝քը և կիները տանիլ Ռապապտի Գիւրտերու վահանները կըսկըսին ցրուիլ ու տարբեր ճամբաներով իրենց տեղերն երթալ: Ճամբան Եւալարէն թելադրուած թուրք կին մը կուգայ իրենց խմբին թէ բազմաթիւ կեռավորները Ռապապտ ապստամբած են: Չարագործները կը խուժեն անմիջապէս հոն, կը գտնեն և կը մորթեն տաներ: Կու Հայեր: Երկու պատանիներ կը յաջողին փախչիլ ու ազատիլ: Մեծատուրեան Պիտրոսի տանեւ վեց տարեկան որդին գետը կը նետուի՝ լողալով անգիտ կողմը անցնելու համար: Հրացանները կուղղուին դէպ իրեն: քաջ պատանին ջրէն վեր ելնելով իր կուրծքը կը ցուցնէ և կը գոչէ «Հոս գարեգին է»: Իր մահը վայրկեանական կըլլայ: Ուրիշ պատանի մը նոյնպէս գետին մէջ գնալով հար կը մեռնի: Մորթուածներուն դիակները գետը նետուած են: Ռապապտի այս սպանութիւնները արգէն լնցած էին, երբ հոն կը հասնին Բինկեանի կիները, որք Քիւրտերէն ետքը ճամբայ ելած էին դէպ ի Ռապապտ զինուորներուն առաջնորդութեամբ: Կիները կը լեցուին խաճիկ անուն թուրք կնոջ մը գաւթին մէջ և կ'իմանան քիչ մը առաջ այնտեղ կատարուած կոտորածը: Եղիկեան իսկուհի իմանալով իր գաւթին և եղբոր մահը, կը փախչի, գետը կը նետուի իր փոքրիկ զաւակը գրկած: Ջինուորները կը հասնին իրեանէն, կը բռնեն ու կը հանեն զինք ջրէն, սակայն փոքրիկը գնացած է արգէն ալիքներուն հետ:

Ջինուորները պաշարած են խաճիկին գաւթիքը և կանանց վայնասուններուն ի պատասխան կըսեն:

— Ի՞նչ հոգ կ'ունէք: ճշմարիտ հաւատքը ընդունեցէք և ձեր քիւ էրիկներուն տեղ աղուորիկ երկտասարգներու պիտի տիրանաք:

Հայ կանանց սարսափը ալ չափ ու սահման չունի: այնքան տանջանքներ և ոնգարմանքի կորուստներ կրելէ յետոյ բռնի իսլամ դառնալու և իրենց հոգեհատարներուն սպանիչներուն կին լինելու գաղափարը խելագարութեան կը

հասցնէ զիրենք: Այս ժամանակ է որ խորմանքն մաման, աղջիկն ու հարսը՝ անմեղեղ քաջութեամբ կը յաջողին ճեղքել զինուորները և գետը նետուելով խեղդուիլ:

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Քարիզ 26 Փետր.

Վերջապէս Ֆրանս. կառավարութիւնը հրատարակեց Հայկական խնդրոյ վերաբերեալ Դեղին տետրակը, որ շատ անկատար է և կը պարունակէ միայն ծանօթ դէպքեր, որոց վրայ հայ ժողովուրդը աւելի մանրամասն տեղեկութիւններ ունի արգէն: Տետրակէն դուրս ձգուած են հիւպատոսական տեղեկագիրներ և այլ պաշտօնական գրութիւններ, զորս Տ. Հանթթո խոստացաւ հրատարակել երկրորդ Դեղին տետրակի մը ձեւով: Այժմ հրատարակուած Տետրակը կ'իմացնէ թէ Հայ ազգը 60,000 հոգի զոհ տուած է իսլամներու սուրին, թէ սակայն այս թիւը պէտք է քառապատիկ անօթութեան հիւսանդութեան և այլ պատճառներով մեծնորոնելու ալ մատուոր հաշիւը գտնելու համար:

Սոյն իր մէկ տեսութեան մէջ զոհերուն թիւը կը հանէ 600,000, որոց կէսը զոհ գացած է կրօնամոլութեան, իսկ միւս կէսը անօթութեան և հիւանդութեան:

Ալանջը խօսի Պօլսոյ Ս. Պատրիարքին և քաղաքական ժողովին, մանաւանդ իր ատենապետ բաշային, որոնք մարդիկ կը զրկեն Եւրոպա՝ համոզելու համար յեղափոխականներն ու այլ կարգի գործիչները որ այլ եւս գաղթին խնդիր և չարժանիներ յարուցանելէ, զի ազգին յարաբերութիւնը թուրք կառավարութեան հետ շատ ցած է եղեր:

Ի ժրնէվ սկսած է հրատարակուիլ թուրքերէն լեզուով կիրիտ անուն մի նոր լրագիր, որ միւսիւրմանները կը հրաւիրէ տապալել Սուլթան Համիտի կառավարութիւնը, որ ամեն չարեաց աղբիւրն է և որոյ բարձմամբ՝ ծագած ամեն խնդիրներ պիտի մարին ու երկիրը պիտի խաղաղի իրենց կարծիքով:

Չարմանալի բան է որ այս մարդիկ, ինչպէս իրենց գործերէն կերել, կը կարծեն թէ կարելի է ժողովուրդ մը յեղափոխական դարձնել լրագիր հրատարակելով արտասահմանի մէջ:

Տ. Ալաւիկեան

Սոյն 17 Փետր.

Չորս օր առաջ այստեղ հասաւ Գեր. Արսէն Վրդ. Վեհունի և սիրալիւր ընդունելութիւն գտաւ ժողովրդէն: Կաթողիկոսական այցելու հովիւը հետեւեալ օրը այցելութիւն տուաւ քաղաքիս կառա-

վարչին և իշխանին ծննդեան տա-
րեգարծին առթիւ շնորհաւորական
հեռագիր մ'ուղղեց Ն. Ա. Բարձ-
րութեան, Որ բարեհաճեցաւ պա-
տասխանել և իր ջերմ շնորհակալու-
թիւնները յայտնել այն բարեմաղ-
թութեանց և իղձերու համար
զորս Հայր Արսէն փութացած էր
իր և ազգին կողմէ իր հեռագրով
մատուցանել Պուլկարիոյ վեհա-
պետին:

Ն. Գերապատուութիւնը այցե-
լեց Ալլգ. վարժարանը և ներկայ
գտնուեցաւ դասախօսութեանց:

Կերակի օրը եկեղեցին լի էր
խուռն բազմութեամբ, որոց մէջ
մէջ կը նշմարուէին կառավարիչը
քանի մը բարձրաստիճան սպաներ
և պատուաւոր Պուլկարիոյ:

Պատարագին էր վեհ. Հայրիկի
ներկայացուցիչը որ յետ սլառա-
բագի հոգեհանգստեան պաշտօն
կատարեց Հայաստանի նահատակ-
ներուն համար:

Եկեղեցական արարողութեանց
աւարտումէն ետք Ն. Գերապա-
տուութեան փոխադարձ այցելու-
թիւն տուաւ կառավարիչը, որուն
ընկերացած էին նաեւ պատարա-
գին ներկայ գտնուող սպաները:

Լոմ-Բալանքա 12 փետր.

Հինգ ամիսէ ի վեր այստեղ կը
գտնուին 127 գաղթականներ, ո-
րոց մէջ նաեւ կիներ և մանուկ-
ներ: Քաղաքագետութիւնը հաճե-
ցաւ մէկ ամիս անոնց բաշխել օ-
րական մէկ հաց մարդ գլուխ:

Թէեւ 400 ֆր. Ռուսներ և
120 ֆր. ֆ. Պօլսոյ յանձնարարէն
նպաստ եկաւ, սակայն յայտնի է
թէ այսքան գումար մը բոլորու-
մին անբաւական էր թշուառնե-
րուն հացն իսկ երկար ժամանակ
հոգալու: Ս'ը կը մնան անոնց ու-
րիշ էական պէտքերը: Հրապարա-
կային շնորհակալութեան արժանի
է տեղացի երեք Հայերու, Տ. Թա-
րսեանի, Տ. Երեմեանի և Տ. Գա-
լուստեանի ջանքերը և առատա-
ձեռնութիւնը, որով կարելի եղաւ
անբաւող գաղթականներուն հայ-
թայթել վառելիք, հագուստեւ այլն:

Թունւաւ 18ին յիշեալ աղգա-
յիններուն նախաձեռնութեամբ
պարահանդէս մը տրուեցաւ ի
նպաստ գաղթականաց: Հեծելա-
գնդի հրամանատարը հաճած էր
զրկել զինուորական նուագախում-
բը: Կըսուի թէ սպաներու շրջա-
նակին մէջ ալ դիտաւորութիւն
կայ դարձեալ պարահանդէս մը
տալու նոյն չարի նպատակով:

ԲՈՌՔԵՍՈՐ

Տ. ԹՈՒՄԱՅԵԱՆ

Եւրոպական քանի մը թերթեր, ընդ
որոնցմէ Վիեննայի Նալէ Ֆրայէ Բուխե
ծանր ամբաստանութիւններ հրատա-
րակած էին Տ. Թումայեանի դէմ այն

գումարներուն գործածութեան մասին,
որոնք իր նախաձեռնութեամբ կամ թե-
ւադրութեամբ հանգանակուեցան Զուի-
ցերիոյ և Գերմանիոյ մէջ ինպատ-
կապատանի կարօտեալներուն: Մեր
ընթերցողներէ ոմանք ալ փութացեր
էին մեր ուշադրութիւնը հրաւիրու-
այս հրատարակութեանց վրայ:

Տ. Թումայեանի կեանքին և գործու-
նէութեան մօտէն տեղեակ եւ վստա-
հութեան արժանի Հայ մը, որուն գի-
մեցիւնք իրմէ այս մասին բացատրու-
թիւն եւ ստոյգ տեղեկութիւններ խնդ-
րելու համար, հետեւեալ պատասխանը
ստուած է մեզ:

«Ամբաստանութիւնը ինձ համար
անակընկալ չէր, ըստ որում լաւ տեղ-
եակ էի թէ ինչպէս ժամանակէ մ'ի
վեր Լոնտօնի Թրքական դեսպանատան
գործակալներ կը ջանային այդ կարգի
ստուութիւններ կլլեցնել Անգլիական
մամուլին եւ սակայն չէին յաջողեր:
Գերմանիոյ մէջ եւս նոյն փորձերուն
յաջող եղան, ըստ որում Բոսֆ. Թու-
մայեան հոն ալ լաւ ճանչցուած էր:

Այս կողմերէն ճարահատեալ, վարձ-
կաններ այդ անարգ ապրանքը քեցին
Վիեննայի Նալէ Ֆրայէ Բուխեի մէջ:
Բոսֆ. Թումայեան Յունի. 29 ին,
Ժընէվէն ինձ գրած է այսպէս:

— Ինձ դէմ հրատարակուած
նենգամիտ ամբաստանութիւնը
հերքելու համար եկած եմ այս
կալմեր: Արդէն ջախջախիչ հեր-
քումներ տրուած են և լրագիրներ
ընէ շատերը հրատարակած: Եւ
այն վիեննական լրագիր, որ նախ
իր թէ Պօլսէն ընդունելով հրա-
տարակած էր այդ լուր, յետոյ ա-
ռաւ իր գրածն, ըսելով թէ իր
ստացած ստուգագրին տեղեկու-
թեանց համեմատ՝ այժմ այդ
զրոյցները անհիմն կը գտնէ: Դատ
պիտի բանամ ուրիշ մի քանի թեր-
թերու դէմ, եթէ վերջապէս չու-
զեն յետոյ կոչել այդ զրպարտիչ
լուրը—:

Այժմ իրողութիւնը պատմեմ ձեզ:
Վիեննայի լրագրին ակնարկած ջա-
ղաքը 1891էն ի վեր Թումայեան եղ-
բարց սեփականութիւնն է: Իսկ կար-
միր մասածի գործը անոնց ժառանգու-
թիւն մնացած է իրենց պապէն և թե-
րեւս պապին պապէն: Վառնա գրու-
նուող Մարգուսեցիներ, եթէ իրենց
գիմէք, ասկէ տարբեր պիտի չպատ-
մեն ձեզ: Բոսֆ. Թումայեանի բանա-
խօսութեանց արդիւնքը հայ կարօտե-
լոց կը զրկուի անգլ. կամ ֆրանս. և
կամ այլ հայանպաստ եւրոպական գոմի-
թէներու ձեռքով:

Սոք մ'ալ մէջտեղ նետուած 3000
ոսկեղ գումարի մասին: Տիկին Թու-
մայեան 1889—1893 Անգլիոյ մէջ չա-
րաչար աշխատեցաւ համեստ զբաղ-
ման մը գոյացնելու համար ի նպաստ
Մարգուսեցի մէջ կառուցանելի հիւան-
դանոցի մը: Տիկինը իր աշխատութեան
առաջին օրէն իսկ հանգանակութեան
գործը Լոնտօնի Lewington Missionի
հովանաւորութեան ներքեւ գրած է:
Մինչեւ 1893ի ամառը, այն է Բոսֆ.
Թումայեանի Թուրքիայէն աքսորումն
և Լոնտօն ժամանումը, այդ գումար
հասած էր 3000 անգլ. ոսկիի, եւ
միշտ կը գտնուէր եւ մինչեւ այսօր ալ
կը գտնուի նոյն միսիոնարական ըն-
կերութեան խնամքին և պատասխա-
նատուութեան ներքեւ:

Ինչ գիւրդին և ինչ անարգ գործ է
ճշմարտութիւնը խեղաթիւրելը»:

Թաղական խորհուրդս կը փո-
թոյ հրապարակաւ իւր խորին
շնորհակալիքն յայտնել այն բարե-
սէր Տեառց որ բարեհաճած են
փոխան ծաղկեպսակի հետեւեալ
նուիրատուութիւնն ընել Ս. Եկեղեց-
ւոյ՝ Նապարէթ Էֆէնի Զրէնկ-
եանի յուղարկաւորութեան տու-
թիւն, որ տեղի ունեցաւ ի քաղա-
քիս ի 12 փետրուար:

Տեառք	Ֆրանք
Թ. և Պ. Պետրոսեան եղբարք	50
Թ. և Ս. Զամպաքեան »	50
Եղիա Գրիգորեան	40
Նապարէթ Պէնլեան	20
Մարտիրոս Բարչաեան	20
Թագուր Պէնլեան	20
Լեւոն Սեդրոսեան	20

220

Միւսիւ Սօլոմօն, Էմֆէթ մէկ
անտուկ մամ:

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ
Ատենագիր Ատենագետ
Լ. Սեդրոսեան Տ. Էմֆրակեան
14 փետր. 1897
Քէօսթէնէ

«ԻՐԱՆԻՆՔ»-ի ՊՍՏԱՍԻԱՆԸ
Տեղեկատու: Խմբագրութեանս
սկզբունքն է չհրատարակել նա-
մակներ որոնք անստորագիր զըր-
կուած են մեզ:

Անդրաք ի Բարիկ. — Ստացանք
պատասխանը զոր տուած էք Տ.
Աղասիի և Տ. Ապահի հերքման:
Ձեր անկեղծութիւնը խնդրոյ ներ-
քեւ չէ մեզ համար: Թղթակցի
պարտականութեան դէմ մեղանշած
ալ չէք վստահելով այնպիսի անձե-
րու տեղեկութեանց, որոց հա-
ւատք չընծայելու ո և է պատ-
ճառ մը չունէիք:

Այս քանի մը տեղերը բաւա-
կան են, կը կարծենք, մեր ըն-
թերցողները վստահեցնելու ձեռ-
ուղղամտութեան մասին: Հետեւա-
բար պէտք չտեսանք ձեր պատաս-
խանը հրատարակելու, որ գուցէ
նորանոր, անօգուտ վիճաբանու-
թեանց գուռ պիտի բանար, և ու-
րոյ մէջ՝ այնքան զօրաւոր պատ-
ճառով մը, կարելի չէ երեւան
հանել ձեզ սխալ տեղեկութիւն
տուող անձերու անունները: Պատ-
րաստ ենք սակայն հաղորդելու զու-
նոնք Տ. Աղասիի և Տ. Ապահի մի-
այն, եթէ փափաքին:

ՀԱՅ-ՊՈՒԼԿԱՐԵՐԷՆ ԳՈՐԴՆԱՅԱՆ ՔԵՐԱՅԱՅՆԻԹԻՆ

Սոյն գործը, որոյ երեք պրակ-
ները հրատարակուած են արգէն,
կոչուած է զգալի պէտք մը լեցնե-
լու, որովհետեւ Պուլկարիոյ բնիկ և
այն գաղթական Հայերուն համար,
որոնք երկրին լեզուն սովորել կը
փափաքին՝ ցարդ կը պակսէր
Հայ-Պուլկարեան գրատարք մը:
Թուսալի է ուրեմն որ հայ հասա-
րակութիւնը լաւ ընդունելութիւն
մը պիտի ընէ այս՝ իր տեսակին
մէջ անգրանիկ հրատարակութեան,

ուր լեզուին գլխաւոր կանոն-
ները բացատրուած են ամփոփ ո-
ճով և գործնական առատ հրա-
հանգներ պիտի ծառայէն զանոնք
տպաւորելու ուսանողին յիշողու-
թեան մէջ:

Գիրքը պիտի բաղկանայ 15-16
պրակէ կամ մօտ 250 էջէ: Բաժ-
նորգազրուութիւնը 4 էջէ՝ կանխիկ
վճարելի: Գիրքը իրենց հասցէին
առանձին ստանալ փափաքողները
պարտին վճարել նաեւ 50ական
սանդիմ փօստի ծախք, որմէ աւաւ
պիտի ըլլան անոնք որ երկու օրի-
նակի համար կը բաժնորգազրուին:
Բաժանորգազրուութեան համար
դիմել Տ. Թագուր Գ. Հինտլեանի,
թղթավաճառ ի ֆ. Պօլսոյ:

Մ. ՍԹՈՅԻԼՕՅԸՆ ՍՕՊՐԱՆԻՅԷՏԷ ՆՈՒԹԳԸ

Պուլկարիա Սօպրանիյէ մէծի-
սինտէ բօլիթիգաի հազըբէտէն
տօլսյը պիր մէպուս թարաֆըն-
տան հիւքիւմէթէ վարիտ օլան
սիւվալէ՝ վիւքէլա ընյիսի Մ. ԸՄ-
թօյիլօֆըն վէրտիկի ճէվալըն
մուսթապար մաալը պէր վէչհիա-
թի տըր:

«Պուլկարիա հիւքիւմէթի ա-
ֆագը սեյյասիյէնին պուլըտըրը-
նը վէ շու սըրա տէօնէն աշվալը
թէտգիգի նազարա ալմագտա գու-
սուր իթմէմէքտէ տիր. ֆագաթ
պիղիմ մէնֆաաթըմըզ խարիճէ էլ
ուղաթմագտան զիյոտէ տախիլի
թէրագըմըզա պագըրմստընտա տըր:
Պունսնը պէրապէր թիւրքիստա
պուլընտն պուլկար վէ սայիր էհա-
լինին աշվալընըն իսլահը վէ միւ-
սալէհէի ումումինին իպգասը ի-
չիւն տիւլէլի մուղղամա լազըմէ-
լէն թէտպիլըլէրի էլէ ալմագտա տըր:
շու հալտէ Պուլկարիա հատտընը
թէճաւիլի իթաիկինտէ, պիւթիւն
միլէլի միւթմէտտինէնին հիտտէ-
թի միւսիպ օլաճաղընա իշթիպահ
օլընումալ: Սթանալ էլէլէրինին
տիյարէթ ու ինսանիյէթբէրվէր-
լիկինէ էմիլիյէթի քիւմիլէմիլ օլ-
մալը տըր. անլար թիւրքիա է-
հալիսին մէսուտ պիր հալէ գօ-
յապիլմէք իչիւն, ուզուն միւլէք-
քէրէլէլէ պիր իսլահաթ ճէտվէ-
լի թէրթիպ իտուպ, էվլորա գա-
պինէլէրինէ եօլլամըչլար տըր: Պու-
ճէտվէլին միւնտէրէճաթը սըրը
գալմագտա իսէտէ, պու սըրը եա-
գընէն մէյտանա չըգմաւընտա մէմ-
նունիյէթիմիլի միւսիպ օլաճա-
ղը զանն օլընմագտա տըր. ֆա-
գաթ աքսի հալինտէ, էտէլիճապ
Պուլկարիա տախի քէնտի իթիրա-
զընը իտիպ, սէսինի իշթիտիր-
մէկէ միւլթմէտիր օլաճաղ տըր:

Էվլէթ Պուլկարիանըն հիւքիւ-
մէթի հազըբէտի՝ շու սըրա վու-
գույա կէլմէքտէ օլան հէր պիր
աշվալը տէօրտ կէօլլէ թէտգիգ
իթմէքտէ օլուպ, իգթիգաի հալ
հէր պիր մուամէլէյէ հազըր պու-
լընմագտա տըր:»

ԹԻՒՐԲԻԱ

Շիմոնյէ գաւառ 25 թապաւր
բէտիֆ վէ պիր ալայ սիւվարի առ-
քէրէրի Սէլանիկէ կէօնտէրիմիշ
տիր :

Օսմանլը հարպ սէֆինէլէրինին
լին իզամարզլըղը հագգընտա կէ-
զէն շայէալարը թէքզիպ իթմէք
իշիւն , պահրիյէ նազըրը հառան
բաշա պիր պէյաննամէ գալէմէ ա-
լարազ , օսմանլը հարպ վարօրլա-
րը՝ հէր պիր տէվլէթին իքինճի
սըննք գուվէի պահրիյէսինէ թաթ
պիզ իտիլէպիլիր տէմիշ տիր , վէ
պու պէյաննամէյի պիւթիւն ի-
քինճի ամիրալարըն իմշալամաւը-
նը էմր իթմիշ իսէտէ , անլարըն
իքիսի իմգալամազ իսթէմէտիզէ-
րի սէպէպլէ հառան բաշա Սուլ-
թաննա պիր մէքիւպ հաղուպ ,
հարպ սէֆինէլէրին ումում գոման-
տանլըղը քէնտիսի իւզէրինէ ալ-
մազա հաղըր պուլընտըղըն պէ-
յան իթմիշ տիր :

Պէլլըրատտան փետր. 20 տէ քէ-
շիտէ օլընան թէլէկրաֆա նազա-
րէն՝ Մաքէտտիստա Սէլանիկ վէ
Մանասթըր արաւընտաքի չըմէն-
տըքէր իսթթըր Րուժ չէթէլէրի
թարաֆընտան պօղուլմը օլուպ ,
գաթոր իշլէմէմէքտէ իմիշ : Րուժ
լար մէքըիւր իսթթըր պօղմազէ
ասքէր նագլինէ միւշքիւթ չըգար-
մազ իսթմիշլէր տիր :

Պրուքսէլտէ (Պէլճիգա) թալէ-
պէլէր հոնանքէրվէր նիւմայիշաթ
իծրա իտիւպ , պիւթիւնէ թիւք
գօնօլոսհանէսինէ հիւճուժ իտէ-
րէք պիւթիւն ճամլարընը գըրմըշ-
լար տըր : հիւքիւմէթ մէննէ մու-
վաֆազ օլամամըշ տըր :

Սապըզ գապթիյէ նազըրը նա-
զըմ բաշանըն Պէրուլթա վալի թա-
յին օլընտըղը Սթանպօլ ճէրի-
տէլէրինտէ օգուլմըշ տըր :

Հիւքիւմէթի հաղըրէի օսմանիյէ
հէր պիր ճանիլէրէ միւքէաֆաթ վէ
մագլումլարա միւճագաթ վէրմէկի
տտէթ իթմիշ օլտըղը իւզրէ , պիր
գաշ ալ էվլէլ Սթանպօլը գոն իլէ
միւլէմն իտէն շու գաւտտար նա-
զըմը շիմոն տէ Պէրուլթա վալի թա-
յին իթմիշ տիր :

Պիր ֆրանսըզ կազէթաւընըն
ալարըղը հալաթիսաթա կէօրէ ,
մուհարէպէ վուգուլիտէ գըրլընա
մէյտան վէրմէմէք իշիւն Րուսիա-
նըն էրմէնիսթանա կիւրէճէկինի՝
Մ. Մաքսիմօֆ իւարիճիյէ նազըրը
Գօնթ Մուրափիէֆտէն ալարըղը է-
միր իւզէրինէ պէյան իթմիշ տիր :

ԵՈՒՆԱՆԻՍԹԱՆ

Երանանիսթան վիւքէլա բէյիսի
Տէլիեանի՝ Ֆիկաթօնըն Աթինա
մուկալիրի իլէ պիր միւլադաթտա
պուլունըպ , տէմիշ տիր : «Երանա-
նիսթան ասքէրլէրինի կէրի չէքէ-

մէզ վէ կիրիտին օրօնօլիսինի գա-
պուլ իթմէյուպ , մէսէլէի կիրիտ-
լիլէրին արզուսը մուճիպ հալ իթ-
մէք գաթարընտա տըր » :

Աթինաաա էհալի հէր կիւննիւ-
մայիշաթ իծրա իթմիկի կիպի ,
մալիյէ նազըրընա տախի միւրա-
ճաաթ իտիլմէսինտէ , Տէլիեանի՝
«հիւքիւմէթ քէնտի վալիֆէլէրի-
նի պիւթ թէնէզլիւ լաղըմ՝ օլտը-
ղը իւզրէ իծրա իտէճէք » տէմիշ
տիր :

Րէսմի կազէթաաա նէշը օլընան
էմիրնամէլէր իւզրէ 88 էն 91 սէ-
նիսինին ասքէրլէրի 3 կիւննէսի-
լաճ ալթընա չաղըրըմըշլար տըր-
օլ վէճէլիւ Երանանիսթանըն սի-
լաճ ալթընտա 100000 ասքէրի
օլաճագ տըր :

Մէսմուլթա կէօրէ՝ Երանան
տօնանմալարը Մաքէտտիսա սէվա-
հիլինէ տօղըրը հարէքէթ իտէճէք
տիր :

Գրալ Եօրկի հաղըրէթլէրի Գօ-
թիւնակ մուկալիրի իլէ կէօրիւշ-
մէսինտէ տէմիշ տիր «կիրիտտէ
օրօնօլի միւմքինսիզ օլաճագ , վի-
լա կիրիտլիլէր անը գապուլ իթ-
մէյօրլար : Երանան ասքէրլինի կէ-
րի չէքիւմէսի՝ թիւքլէրին տտէ-
թի գաթիմէսի իւզրէ , Ենի գըր-
կընլարա սէպէպիլիթ վէրէճէք
տիր » :

Բօլիքիլէ Գօթիսթօնտէնըն Լա-
րիցաաաա ալարըղը մալիւմաթա
կէօրէ , փետրվար 19 ա գաւառք
թէսալիաաա թէճէմիւլ օլընան
Երանան ասքէրի տնճագ 8000 քի-
շիյէ պալիզ օլմըշ տըր :

Լօնտրատա Երանան էլշիսինին
վէքիլի կիրիտ իշլէրինէ իտէն օլ-
մազ իւզրէ 12000 լիրա գապուլ
իթմիշ տիր :

Պիր թագըմ ինկիլիլէր Աթի-
նայա կէօնիւլի կիթմիշլէր վէ
պաշապար տէ կիտէճէքլէր իմիշ :

Տէօրտ տտէթ Երանան հարպ
սէֆինէլէրի Սէլինայա տօղրու հա-
րէքէթ իթմիշլէր տիր :

ԿԻՐԻՏԻՆ ԱՆՎԱԼԸ ՏԱԽԻ ԻՅԷՍԻ

Ատտըն հալի թէպտիլ օլմամըշ
տըր : ասըլար , ասքէրլէր վէ
թիւքլէր մէվզը վէ իսթիգաթա-
րընը էլան թուլմագաա տըրլար :
Ամիրալար իթթիֆագը թամմէտէ
պուլընուպ , մէսուլիլէթի ասըլարա
աթֆ իթմէքլէ , թիւք հիւքիւմէ-
թինին կէտիշինի թահսին էլլէ-
մէքտէ օլտըղլարընը Գաննատան
քէշիտէ օլընան պիր թէլիկրաֆ
պիւթիլիյօր :

Կիրիտտէ մուհասէրէ ալթընտա
պուլունան թիւքլէրի գուրթար-
մազ իշիւն՝ էճնէպի զըրշլըրաաա
500 նէֆէր պահրիյէ ասքէրի Բա-
էնայա չըգուպ Րուժլարա գարշը
ճէպը իսթիմալ իտէճէք իմիշ :

Պիր վագըլթաան պէրու Երանան
գօմանտանը միրալայ վասօնըն օր-
տուկնահընտա պուլընան Երանան

գօնօլօսը՝ ամիրալարա իսթապ
վասօսին պիր մէքիւպիլինի կէ-
թիւրմիշ տիր : մէքըիւր մէքիւպլէ
միրալայ վասօս թիւք Ենիքլէ-
րինի շու շարթլէ սէրպէսթ պըրա-
գաճըղընը պիւթիլմէքտէ իմիշ ,
Եանի՝ մէքըիւր Ենիքլէք սիւհալա-
րընը թէքք իտիւպ , պիր տախի
Երանանիսթանա գարշը հարէքէթ-
տէ պուլունմաւընլար :

Գաննատան ճիւլարընտա գապիւ-
լար տէվաթ իթմէքտէ տիր : ասը-
լարտա թօրլար տախի պուլընա-
րապ , Գաննատան օրմուհասէրէ իթ-
միշլէր տիր վէ թիւքլէրին սի-
լաճլարընը պըրագուպ կիթմէլէրի-
նի թալէպ իթմէքտէ տիրլէր :

ՏԵՂԱԿԱՆ

Պատ. Թաղ. Սորհուրդը խնդրած է մեզ-
մէ հրատարակել հետեւեալ որոշումները,
զորս իր հրաւերով այս ամսոյ 23 ին
գուստուած Թաղ. Ընդհանուր Ժողովն
քուէարկած է :

1. Կառուցուելիք զարոցական շէնքը
բաւական ըլլայ պարունակելու 400 ա-
շակերտ եւ աշակերտուհի եւ ունենայ
վերնայարկ մը որ ծառայէ իբր առաջ-
նորդարան եւ խորհրդարան :

2. Շէնքին արժողութիւնը լինի ի-
բըր 30,000 ֆռ. ոսկի . այս ծախքը
գոցելու համար հրկիզալ շէնքը ապա-
հովագրող ընկերութիւնէն գանձուած
14,000 ֆռ. ք գործածելէ զատ , մնա-
ցորդ գումարը հայթայթելու համար կա-
տարել հանգանակութիւն մը :

3. Հանգանակութեան գործը յանձ-
նուի հետեւեալ ճեարք
Մ. Աւագ Մարգարեան
Խաչիկ Տամատեան
Մազաթ Մինասեան
Մարտիրոս Փափագեան
Մուրատ Մ. Սարգիսեան
Յովհաննէս Տէրունեան
Շնորհք Տավուտեան
Պօղոս Փափագեան
Սարգիս Գիւրտեան

Եւ ժողովին այս ընտրութիւնը հա-
ղուրդել իրենց Թաղ. Սորհրդոյ ձեռամբ :

4. Թաղ. Սորհրդոյ կը յանձնուի չէն-
քին կառուցման համար հարկ եղած տը-
նօրինութիւններուն ձեռնարկել եւ
ընտրել իրեն օժանդակ յանձնախումբը :

Պու Բէնճէնպիհ կիւնիւ Ս.
վարդանանց եօրթուր օլմագ
մինասիպէթի իլէ Պատարալ-
տան սօնրա Եկեղեցի հալլը-
սընտա սուրէթի միւնթագամէտէ
ազգային հանդէս իծրա օլընուպ ,
Երզլէր վէ նուլթլար սէօլլէնտի .
ֆէվզէլատէ պիր գալապալըզ հա-
ղըր պուլունմըշ տըր :

Արժանայիշատակ Տ. Մկրտիշ
վարդապետ Տէրունեանըն մահրու-
զէն վէֆաթ իթմէսի սէնէի տէվ-
րիյէսի օլմագ մինասիպէթի իլէ
էօնիւմիւզտէքի ճուլմէթէսի կիւ-
նիւ հոգնհանգիստ ախը իծրա
իլէ պիր նուլթ տախի իրաւ օլը-
նաճաղը մէսմուլմիւզ օլմըշ տըր :

Իշիթտիկիլմիզէ կէօրէ , մուհա-
ճիլլէրտէն Յակոբ Համալեան , Հաճի
Արիճեան , վէ Զաքար Տանոս Գալ-
ֆաեան նամ շախալար բազար էր-

թէսի կիւնիւնտէն պէրի զալպ օլ
մուշ օլտրապ , տօսթլարը վէ հէմ-
շէհրիլէրի թարաֆընտան արանը-
մագաա տըրլար :

ՊՈՒ ԿԻՆՔԻ ԹԵԼԵԿՐԱՖԻԱՐՏԱՆ ՄԻՍԹԵԼԵՐԱՃ (Սթանա Պալատիք)

վէլէնա 25 փետրվար
Բօլիքիլէ Գօթիսթ. ճարիստէն
ալարըղը մալիւմաթա կէօրէ , կի-
րիտի վէ Երանանիսթանը մուհա-
սէրէ ալթընա ալմագ իքթիլա
սընտա՝ ամիրալար տէվլէթլէրտէն
մըգաւորը քէաֆի ասքէր իսթէ-
միշլէր տիր :

Աթինա 24 փետրվար
Հալաա՝ Երանանիսթան ճէվա-
պընըն էվլուրատաքի Երանան սէ-
ֆիլլէրինէ վէ գօրիսլարը Էվրոթա
տէվլէթլէրինէ՝ էօլլէնտէն սօնրա՝
պա թէլէկրաֆ վէրիլէճէկինի պիւ-
տիլմէքտէ տիր : ճէվապըն միւն-
տէրիճաթը բէք պէյան տէկիլ ի-
միշ իսէտէ , սէօլլէնիլտիկինէ կէօ-
րէ , ճէվապիւմէ ալթիտէքի նօգ-
թալարտան միւրէքքէպ իմիշ :

Ճէվլէթլէրին արզուսը մուճիպ՝ Եու-
նանիսթան Իրիտլիլէրէ իսլահաթը
գապուլ իթմէլէրինի թալսիլէ թթի ,
ֆագաթ թիւքլէր իսլահաթըն իծրա-
սընը միւմքինսիզ պիր հալա գօյալար :
Երանանիսթան գարըղըղլարտա քէն-
տի միլլէթտալ պիրատէրլէրինի մու-
հաֆագաթը ալթընա ալմայա մէճպուր
տըր : Եու մէսէլէ օրօնօլի իլէ հալլ օ-
լընամալ , պու օրօնօլի էվլէլտէն գա-
պուլ օլընամալ իտի , շիմոն Կիրիտլի-
լէր անը գապուլ իթմէյօրլար : Երանա-
նիսթան Կիրիտլիլէրէ միւթագաթ
իթմէքտէ տիր : Ասքէրլէրինի վէ վա-
թօրլարը կէրի չաղըրըմաւընէն իս-
թիլալթա մէյտան վէրէճէկինտէն
Րուժ միլլէթի իլէ միւտալիլէ իթմէք-
տէն կէրի տուրամազ :

Գաննա , 24 փետր.
Խրիսթիյանլար քէլաթ իօն նամ
գալէի տաղըտմագ թէճըրկապէսին-
տէ պուլընտըլար . նիլամի ասքէր-
լէրտէն 3 քիշի էօլտիւ վէ 9 քիշի
Եարէլէնտի , Շէհրիլէրտէ ասալիլին
իպգաթը իշիւն ամիրալար տէվ-
լէթլէրտէն ասքէր իսթմիշլէր տիր :

Սթանպօլ 24 փետր.
Մաքէտտիստա թէճէմիւլ օլան
թիւք ասքէրլէրին մէճմուլի 55000
քիշիէ , Եանի Երանան ասքէրլինին
տէօրտ միսլինէ պալիզ օլմուշ տըր :
Սէլանիկ , Գաթէրինա վէ Բրէ-
վէլան իլիմանլարընը թագվի-
յէսինէ մուպաշէրէթ օլընմըշ տըր :
Էվլէքի իսլահաթ աճքիւմընճա
Կիրիտտէ Ժանտարմա թէլէքիլի ի-
շիւն կիթմիշ օլան գապիլթլէր ալ-
տըղլարը էմիր իւզրէ , մէմուրիյէ-
թէ չաղըրըմըշ օլան ատամլարը
իլէ պէրապէր կէրի կէլէճէքլէր
տիր :

Ով որ Որդիկ փափագեան ա.
նուն 28 տարեկան կ. Պօլսեցի
(Սարընարցի) երիտասարդին ուր
գտնուիլը գիտէ , թո՛ղ հաճի իմա-
ցընել Գահիրէի Հայոց առաջնոր-
դարանին :